ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մասնագետների գնահատմամբ զբոսաշրջությունը մշակույթների փոխհաղորդակցության և տարբեր ժողովուրդների ու երկրների միջև պարբերական կապերի իրականացման մի ինքնատիպ եղանակ է, որը խթանում է նաև մշակութային բազմազանության ճանաչումը և գնահատումը: Իսկ մշակութային տուրիզմը զբոսաշրջության տեսակ է հիմնված մշակութային բազմաբևեռույթ տպավորությունների վրա: Բացի այդ, ներառում է նաև զբոսաշրջության բոլոր տեսակները, որոնք ունեն ճանաչողական, կրթական և գեղագիտական նպատակներ: Այն զբոսաշրջիկներին առաջարկում է մշակութային ապրանք՝ մշակութային տպավորությունների տեսքով: Մշակութային զբոսաշրջության խթանիչ ուժը մարդկանց ստեղծած մշակութային բազմաշերտ ժառանգությունն է (պատմամշակութային արժեքներ, ժողովրդի կողմից ստեղծված կենցաղամշակութային ավանդույթներ ու արհեստագործական առարկաներ հոգևոր և նյութական մշակույթի ողջ համալիրը)[1]: Սրանով իսկ, մշակութային զբոսաշրջությունը տուրիզմի հիմնական և ինքնուրույն տեսակներից է, որը զբոսաշրջիկներին առաջարկում է նոր տեղեկատվություններ ու սեփական փորձի վրա հիմնված անկրկնելի տպավորություններ[2]:

Իհարկե, բացառված չէ, որ որևէ զբոսաշրջիկ իր համար անծանոթ երկրում ուղևորություն կատարելու ընթացքում չկարողանա ըստ ամենայնի հաղորդակցվել նոր մշակույթին բնորոշ արժեքներին կամ դրանք ընկալել ամբողջությամբ, որից կարելի է եզրակացնել, որ նա ինչ-ինչ պատճառներով, ի վիճակի չեղավ ընկալել ու արժևորել այդ նոր մշակութային կապիտալի հմայքն ու ներուժը: Կարծում ենք, նման դեպքերից խուսափելու արդյունավետ միջոցներից է նախապատրաստական աշխատանքը, որտեղ առանձնակի ուշադրություն պետք է հատկացնել ենթադրյալ զբոսաշրջիկների շրջանում հյուրընկալ երկրի ու մշակույթի մասին բազմակողմանի տեղեկատվության տարածմանը՝ տարբեր տարիքային, սոցիալական և մասնագիտական խմբերի նախասիրություններին ու հետաքրքրություններ-

[1] Ричард Пренсис. Культурный туризм как конструирование аутентичность и впечатление. М., 2006, с. 300.

[2] Биржаков М.Б., Введение в туризм. М., 2006, с. 360.

րին համապատասխան նյութեր ներկայացնելու միջոցով: Այս գործընթացի մասնագիտական քննությունից ու անհրաժեշտ քայլերի մշակումից է կախված աշխատանքի արդյունավետ կազմակերպումն ու ցանկալի արդյունքը: Զբոսաշրջության կառավարման ու կազմակերպման խնդրում առանցքային են թիրախ խմբերի ընտրության և նոր շուկաների նվաճմանն ուղղված աշխատանքները[3]: Մեր հոդվածի շրջանակներում կանդրադառնանք դրանցից մի քանիսին:

Զբոսաշրջական մշակույթի ուսումնասիրման միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրի զբոսաշրջության կայուն աճն ու զարգացումն ապահովելու համար խիստ կարևորվում է ճանաչողական միջոցառումների կազմակերպումը: Այս շրջանակներում 2011թվականին նախատեսվում է առավել ակտիվացնել այլ երկրներից դեպի Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպումը՝ ներգրավելով լրագրողներին, զբոսաշրջական ոլորտի տարբեր մասնագետներին ու գործարարներին: Այցերի հիմնական նպատակը վերոհիշյալ խմբերին հայկական մշակույթի, սովորույթների, պատմական ժառանգության, արդի ձեռքբերումներին և զբոսաշրջիկներին հետաքրքրող տարաբնույթ տեղեկատվության տրամադրումն է, որը Հայաստանը՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ երկիր, նս մեկ անգամ դրսում գովազդելու միջոցներից է: Այսպիսի այցերի կազմակերպումը նպատակ է Հայաստանի զբոսաշրջության մասին իրազեկության բարձրացմանը և օտարերկրացիներին դեպի Հայաստան գրավելուն: Ճանաչողական այցերի կազմակերպման շրջանակներում՝ վերջին տարիներին Հայաստանի մասին բազմաթիվ ճանապարհորդական ուղեցույցներ, քարտեզներ, հոդվածներ են տպագրվում, նկարահանվում գովազդային հոլովակներ ու տարածվում հեռուստաընկերությունների միջոցով: Նկատենք սակայն, որ մեր ժամանակներում հսկայական այցելուներ ունեցող սոցիալական ցանցերում դեռևս նման գովազդային նյութերը եզակի բնույթ են կրում և հիմնականում ակտիվ անհատների գործունեության արդյունք են: Մինչդեռ թե եվրոպական, թե մեր տարածաշրջանի երկրների ու մշակութային արժեքների մասին նյութերը բառիս բուն իմաստով հեղեղում են համացանցի հետ բոլոր հաղորդակցվողներին:

Նկատի ունենալով, որ 2011թվականը ԱՊՀ-ի տարածաշրջանի երկրներում հայտարարվել է պատմամշակութային ժառանգության տարի[4], կարծում ենք, նպատակահարմար է անդրադառնալ նաև Հայաստանում մշակութային տուրիզմի շրջանակներում կազմակերպվող բազմաթիվ

---

[3] Михайлова Л.И., Культура свободного времени и личность, Москва, 2004, с. 307

[4] Հայաստանի տուրիզմի ոլորտը. ամի հնարավորություններ և անհրաժեշտ միջոցառումներ , Երևան, 2010:

միջոցառումներին և փառատոներին, որոնք յուրահատուկ կամուրջ են մեր երկիր այցելող օտարերկրացիների և հայաստանաբնակների միջև:

Հայաստանի զբոսաշրջային գրավչության մասին իրազեկության բարձրացման և զբոսաշրջիկներին դեպի Հայաստան գրավելու արդյունավետ և արդիական միջոցներից է նաև զբոսաշրջիկների ներգրավումը հայկական արվեստի շուկա: Այս առումով, 2011թ. նախատեսվում է արվեստի տարբեր ճյուղերը ներկայացնող փառատոների և ավանդական ու նոր տոնակատարությունների կազմակերպում, որն ուղղված է երկրի մշակույթն ու ավանդույթները հանրահռչակելուն[5]: Փորձը ցույց է տալիս, որ ամենամյա փառատոնները ու տոնակատարությունները, որոնք ունեն ազգային, մշակութային բնույթ, գրավում են բազում զբոսաշրջիկների, նպաստում միջազգային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ նկարագրի ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանում զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը:

Պետք է արձանագրել, որ վերջին տարիներին, շնորհիվ զբոսաշրջության ոլորտում վարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև հիմնական շեշտը դեպի մշակութային արժեքներն ուղղելը, որոնք այնքան բազմազան և առանձնահատուկ են (ժողովրդական տոներ, ավանդույթներ), արձանագրվում է այցելուների դինամիկ աճ: Դրա վառ օրինակներից կարելի է համարել Հայրենակցական միության կողմից պարբերաբար կազմակերպվող Մուսա լեռան հերոսամարտին նվիրված ուխտագնացություն-տոնակատարությունը, որին մասնակցելու նպատակով աշխարհի տարբեր ծայրերից ժամանում են սփյուռքահայերը: Այն յուրօրինակ հետաքրքրություն է առաջացնում նաև տարբեր ազգության զբոսաշրջիկների շրջանում, քանի որ հնարավորություն է տալիս տարածքում գործող թանգարանային ցուցադրությունից հավաստի տեղեկություններ ստանալ մեր պատմության սահմանային իրավիճակների մասին, անմիջականորեն հաղորդակցվել աշխարհասփյուռ մուսալեռցիների հետ, մասնակցել տոնական միջավայրում հնչող ավանդական երգ ու պարին, համտեսել որպես զոհաբերություն մատուցվող հարիսան:

Հայությանը միավորող լայնածավալ միջոցառումներից են արդեն հինգերորդ անգամ պետականորեն կազմակերպվող Համահայկական մարզական խաղերը: Այս նպատակով ժամանած զբոսաշրջիկների թիվն անհամեմատ մեծ է, որը նկատելի է անգամ մայրաքաղաքի կենտրոնական փողոցների բազմամարդությամբ, սրճարանների, ժամանցային այլ վայրերի եռուզեռով, արևելահայ ու արևմտահայ խոսվածքների փնջերով: Ուրախալին այն է, որ համահայկական խաղերի անցկացումը վերածվեց

[5] www.mineconomy.com

անշրջելի ավանդույթի, որը կխթանի մեր հայրենակիցների միասնությանն ու հայապահպանության գործոնի ամրապնդմանը, ինչպես նաև կնպաստի հայ և օտարերկրյա զբոսաշրջիկների այցելությունների աճին:

Այս առումով, պակաս հետաքրքրություն չի ներկայացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հոկտեմբերի 17-ին Վայոց ձորի մարզի Արենի գյուղում կազմակերպված ավանդական դարձած բերքի և գինու փառատոնը: Մասնագիտորեն իրականացված գովազդի շնորհիվ[5] Հայաստանի տարբեր վայրերում և արտերկրում ազգային ավանդույթներով հետաքրքրվողների և որակյալ գինին գնահատողների համար ավելի մատչելի ու հասանելի է դառնում տեղեկատվությունն այս փառատոնի մասին: Իսկ կենդանի գովազդի վերածված նախորդ տարիների մասնակիցների վառ տպավորություններն էլ ավելի են խթանում փառատոնին անձամբ մասնակցելու նրանց ցանկությունը: Բոլորն այստեղ հնարավորություն են ստանում համտեսել հայկական լավագույն գինիներն ու գյուղում պատրաստվող ավանդական կերակրատեսակները, ոչ միայն հիանալ ազգային երգ ու պարով, ժողովրդական խաղերով, կենցաղային տեսարաններով, այլև անմիջականորեն մասնակցել դրանց[6]: Զբոսաշրջիկների շրջանում մեծ հետաքրքրություն վայելող տոներից կարելի է համարել վեջին տարիներին ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո իրականացվող «Մեկ ազգ մեկ մշակույթ» համահայկական փառատոնը, որն այս տարի կազմակերպվելու է չորրորդ անգամ: Փառատոնի նպատակն է մշակույթի ոլորտում հայտնաբերել և համախմբել հայերի մասնագիտական ներուժը և որ ամենակարևորն է՝ ստեղծել համահայկական մասնագիտական ընկերակցություններ: Ինչպես նշում է ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, այս տարի փառատոնը նվիրվել է ՀՀ և Արցախի Հանրապետության անկախության 20 ամյակին: Փառատոնի հիմնական նպատակը համապետական, համահայկական միջոցառման կազմակերպումն է, որը կամրջում է հայրենիքը սփյուռքին և հակառակը[7]: «Մեկ ազգ մեկ մշակույթ» փառատոնն, ի տարբերություն մյուս տարիների, անցկացվելու է տարվա ընթացքում և կենտրոնացած չի լինելու միայն ամռվա 1-2 ամիսներին, որը կնպաստի փառատոնի աշխարհագրության մեծացմանը, ավելի շատ զբոսաշրջիկներ կայցելեն մեր երկիր: Անդրադառնալով համահայկական տոներին չի կարելի անտեսել սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումները, որոնք մեծ շուրջով նշում էին ոչ միայն մայրաքաղաքում, այլև տարբեր մարզերում: Կազմակերպվել էին բազմաբնույթ պաշտոնական, մասնագիտական սեմինարներ, հանդիպումներ, տոնական,

---

[5] www.ankakh.am Գինու փառատոն Արենիում, հոկտեմբեր, 2011:

[7] www.7or.am. «Մեկ ազգ, մեկ մշակույթ», հուլիս, 2011:

ժամանցային միջոցառումներ տարբեր նախասիրությունների ու տարիքի անձանց համար: ՀՀ անկախության 20-ամյակի տոնակատարությունների ամենահզոր ակորդը զինվորական շքերթն էր, որ անջնջելի տպավորություն թողեց թե հայ, թե օտարազգի ականատեսների վրա: Առանձնակի հանդիսավորությամբ էին կազմակերպված նաև Հանրապետության հրապարակում կայացած տոնական համերգն ու շքեղ հրավառությունը: Լայնածավալ աշխատանքներ էին տարվել նաև քաղաքի տոնական ձևավորման, կենտրոնական փողոցների, հրապարակների, կամուրջների և հուշարձանների լուսավորության ուղղությամբ: Տոնական օրերին զբոսաշրջիկների համար Քաղաքապետարանի պատրաստած հաճելի անակնկալներից էր նաև երկհարկանի հարմարավետ ավտոբուսներով «Սիթի տուր» երթուղային ծրագիրը, որ հնարավորություն էր ընձեռում շրջել Երևանով, տեսնել ու տեղեկություններ ստանալ տասնյակ պատմամշակութային վայրերի ու հուշարձան-կոթողների մասին:

Մեր երկիրը ներկայացնելու լավագուն տարբերակներից է նաև հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում հայրենական զբոսաշրջային արտադրանքը ներկայացնելը, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջության ոլորտի գործարարների և ենթադրյալ զբոսաշրջիկների շրջանում: Հայկական զբոսաշրջային կազմակերպությունների մասնակցությունը Բեռլինի, Լոնդոնի, Փարիզի, Միլանի, Հռոմի, Մադրիդի, Տոկիոյի, Մոսկվայի միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսներում լուրջ խթան է Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի համար: Այս ցուցահանդեսներից առավել նշանակալից է Բեռլինում ներկայացված <<Մասնակցություն խորովածի փառատոնին>> նախագիծը, որի շրջանակներում հայկական խորովածի չբացահայտված կողմերը արտերկրում տարածելու և դրա միջոցով մեր ժողովրդական մշակույթը հանրահռչակելու համար հոկտեմբերի 25-ին Լոռու մարզի Ախթալայի սբ. Մարիամ եկեղեցու բակում կանցկացվի հերթական Խորովածի մրցույթ-փառատոնը: Արդեն ավանդական դարձող փառատոնը մեծ հետաքրքրություն է ձեռք բերել ոչ միայն Հայաստանի տարբեր մարզերի բնակիչների շրջանում, այլև Վրաստանում, Ռուսաստանում, Եվրոպայում: Անգամ հեռավոր Հունաստանում բնակվող ախթալացիները փառատոնի օրերին այցելում են Հայաստան՝ մասնակցելու միջոցառմանը[8]: Հրավիրվումն են նաև միջազգային և հասարակական կազմակերպություններ, զբոսաշրջության ոլորտի մասնագետներ: Փառա-

---

[8] www.armtown.com . Խորովածի փառատոն Ախթալայում, Լարիսա Փարեմուզան. Սեպտեմբեր, 2011.

տոների հիմնախնդիրը Հանրապետությունում զբոսաշրջության համաչափ զարգացման ապահովումն է:

Տարբեր երկրներում կարևորվում են սեպտեմբերի 27-ին Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարությունները: Նպատակը զբոսաշրջության կարևորության մասին իրազեկության տարածումն է, ինչպես նաև մշակութային և պատմական հարստությունների պահպանման ասպարեզում հանրությանը տուրիզմի դերը ներկայացնելը: Սակայն պետք է նկատել, որ այս տոնը մեզանում չի նշվում: Մեր համաքաղաքացիները նույնիսկ գաղափար չունեն դրա մասին:

Ըստ վիճակագրական տվյալների, անցյալ 9 ամիսների ընթացքում մեր երկիր այցելած զբոսաշրջիկների թիվն ավելացել է 15.6%-ով: Դաշտային նյութեր հավաքելիս փորձեցի զրուցել զբոսաշրջիկների հետ ճշտելու, թե ինչ նպատակով են այցելել Հայաստան: Պատասխանները տարբեր էին: Օրինակ, մի ֆրանսուհի պատասխանեց. «...հայերի մտածողությանը, մշակույթին, ավանդույթներին ծանոթանալու նպատակով, և ամեն ինչ շատ տպավորիչ է»[9]: Մեր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին զբոսաշրջիկների հետաքրքրությունների շրջանակը փոքր ինչ փոխվում է: Եթե 2 տարի առաջ ամենատարածված պատասխանը բնության, տեսարժան վայրերի, որպես առաջին քրիստոնեա երկիր լինելու կամ հայրենաբաղձության հետ էր կապված ապա այս տարի պատկերը այլ էր, քանի որ օտարները զալիս են ծանոթանալու մեր երկրի մշակութային բազմազանությանը:

Մշակութային տուրիզմի զարգացման խնդրում հսկայական ներուժ կարող են դառնալ թանգարանային գործունեության նորովի մոտեցումները՝ հատկապես թանգարանն իբրև մշակութային-տեղեկատվական մատչելի միջավայր ձևավորելը և գովազդելը: Եթե մշակութային տուրիզմը դիտենք դասական կտրվածքով, ապա այն զբոսաշրջիկներին ծանոթացնում է նոր տարածքների, էթնիկ մշակույթի, կրոնի, քիչ հայտնի կամ անծանոթ մշակութային երևույթների ու արժեքների հետ: Դրանք լավագույնս ներկայացվում են թանգարանային ավանդական և ժամանակակից մոտեցումներով իրականացված ցուցադրությունների, հավաքածուների, տարբնույթ միջոցառումների ու նախագծերի միջոցով[10]: Այս շարքում նաև կարելի է հատուկ ծրագրեր մշակել հանգստի, ժամանցի ու սննդի կազմա-

---

[9] 2010-2011թթ. Մեր հարցումներին մասնակցել է մի քանի տասնյակ զբոսաշրջիկ. ֆրանսիացիներ, կանադացիներ և սիյուռքահայեր:

[10] Биржаков М.Б., նշվ. աշխ., էջ 21-22: Այս մասին մանրամասն տե՛ս Շուլեր Թ., Զբոսաշրջիկներ անհամասեռ տեսակներ. ինչպես թանգարանը պետք է ընդլայնի իր ռազմավարությունն ու ծառայությունները: //Թանգարան գիտատեսական, մեթոդական ամենամյա հանդես, Երևան, 2011, էջ 193-207:

կերպման ազգային և ժամանակակից նոր, ինքնատիպ, հանրության տարբեր շերտերին հետաքրքրող և մատչելի եղանակների ստեղծման և վերակազմավորման ուղղությամբ ներգրավելով նաև գործող մշակութային օջախները (թատրոն, թանգարան, կինոթատրոն, համերգասրահ, մարզադահլիճ և այլն):

Նյութերի քննությունից բխող եզրակացության համաձայն միջազգային ասպարեզում հայկական մշակույթի մրցունակությունն ապահովելու և դրա միջոցով զբոսաշրջային առավել մեծ շուկա նվաճելու համար անհրաժեշտ է համակողմանի և համակարգված ռազմավարություն մշակել՝ ներգրավելով զբոսաշրջության, մշակույթի, գիտության, և գործարարությունների լավագույն մասնագետներին՝ նպաստելով պետական և մասնավոր օղակների միջև ներդաշնակ և փոխշահավետ աշխատանքների իրականացմանը: Մշակութային զբոսաշրջության զարգացման հեռանկարային ծրագրերում առանձնահատուկ ուշադրություն դարձնել ավանդական և ժամանակակից մշակութային ժառանգության նյութական և ոչ նյութական արժեքների ներկայացման արդի եղանակներին՝ տարբեր սոցիալական և տարիքային խմբերին հասցեագրված առաջարկի փաթեթների ձևով:

The Modern Challenges of the Development of Cultural Tourism in Armenia

The article is about the particularities of the organization and realization of cultural tourism in Armenia. It is based on professional literature and field research conducted by the author (personal observations, interviews with tourists and organizers). Attention is paid to the issues related to implementation of new ways and methods of cultural tourism in Armenia emphasizing traditional holidays and cultural festivals. The latter are observed as cultural bridges that make our country more recognizable in the world due to which it is possible to foster the consolidation of ties between the Motherland and the Diaspora. In the framework of cultural tourism the role of museums is also observed as a unique and available environment for cultural dialogue and information exchange.

According to the conclusion driven from the examination of materials, in order to provide the competitiveness of the Armenian culture on the international scale and to achieve larger touristic market in that way it is necessary to develop a comprehensive and structured strategy involving the best specialists in the fields of tourism, culture, science, and business contributing to the implementation of harmonic and mutually beneficial cooperation between the state and private sectors.

It is necessary to pay particular attention to the modern methods of presentation of materialistic and non-materialistic values of traditional and modern cultural heritage in the perspectives of development of cultural tourism in the shape of proposal packages meant for different social and age groups.